307 Քայլում էի տխուր անապատի մեջ,

1. Քայլում էի տխուր անապատի մեջ,
Ծարավն էր տանջում անվերջ ու անվերջ,
Ձեռքերս պարզած, անուժ ու լացով
Խնդրեցի. «Աստվա՛ծ, կյա՛նք տուր Քո ջրով»:

Աղբյուր բացվեց, ջուրը խմեցի,
Կյանք ստացած՝ աչքերս բացեցի,
Տեսա Հիսուսին՝ ժպիտը դեմքին,
Կորած գառն էր տանում Իր ուսին:

2. Ձեռքիցս բռնած՝ անապատն անցանք,
Ներեց Հիսուսս չարություն, հանցանք:
Արցունքն աչքերիս, ոտքերին փարված՝
Գոչեցի լացով. «Հիսո՛ւս, ի՛մ Աստված»:

3. Հիսուսն էր գնում, ես էլ՝ ետևից,
Նա ինձ փրկել էր չոր անապատից,
Գնում էի Նրա լույս ճանապարհով
Ու ինձ զգում էի հարուստ, ապահով:

4. Ու խոսեց Տերս. «Ես եմ լույս-կյանքը,
Ճշմարտությունը ու ճանապարհը:
Խաղաղություն ես գառներիս կտամ,
Ծատ շուտով նրանց ետևից կգամ»: